ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/23 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ջրվեժ «06» հուլիսի 2022թ.
ժամը 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան,
Հանձնաժողովի անդամներ՝ Ս.Հովհաննիսյան, Հ.Գրիգորյան,
Հանձնաժողովի քարտուղար՝ Ա.Պետրոսյան

Պատվիրատուն՝ Ջրվեժի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, գ.Ջրվեժ Մելքոնյան 76 հասցեում, ստորև ներկայացնում է «ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/23» ծածկագրով Ջրվեժ համայնքի կարիքների համար ջրաչափերի ձեռքբերման և տեղադրման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցումով ընթացակարգի բացման և գնահատման նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

N ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/23 ծածկագրով գնանշման հարցման հայտերի բացման և գնահատման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ գնանշման հարցման հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումը | Գտնվելու վայրը, հեռախոսահամարը, էլ.փոստ |
|---|---|---|
| 1 | «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ | ք.Արտաշատ, Աթարբեկյան 133<br>հեռ. 093 18 86 50<br>vandajiooo@mail.ru |
| 2 | «ՌԱՆԵԼ» ՍՊԸ | ք.Երևան, Ազատության 9/9<br>հեռ. 041 20 25 22<br>ranel.80@mail.ru |
| 3 | «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ | ք.Երևան, Ովնեցու 31<br>հեռ. 055 90 70 70<br>avetisyanshin@mail.ru |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

2. Ծրարների կազմման և ներկայացման համապատասխանությունը.

Համապատասխանում են՝ «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ-ի, «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի և «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ծրարները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

3. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են .

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Առաջարկված գինը (ՀՀ դրամով) | | | Գնման գին |
|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ-ն | Առաջարկված ընդհանուր գինը | |
| 1 | «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ | 4 250 000 | 850 000 | 5 100 000 | 5 600 000 |
| 2 | «ՌԱՆԵԼ» ՍՊԸ | 5 600 000 | 0 | 5 600 000 | |
| 3 | «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ | 4 666 666,67 | 933 333,33 | 5 600 000 | |

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4.Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները ԿՄՋՀ-ԳՀԱՇՁԲ-22/23 ծածկագրով գնանշման հարցման մասնակիցների ներկայացված փաստաթղթերի փաթեթների վերաբերյալ.

«ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ-ի, «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ի և «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը համապատասխանում են հրավերի պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

5.Գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» թիվ 526-Ն կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետը, հանձնարարում է հանձնաժողովի քարտուղար Ա.Պետրոսյանին բավարար գնահատված բոլոր մանակիցներին՝ «ՎԱՆԴԱԺԻ» ՍՊԸ-ին, «ՌԱՆԵԼ» ՍՊԸ-ին և «Ավետիսյան Շին Մոնտաժ» ՍՊԸ-ին միաժամանակ էլեկտրոնային ձևով ծանուցել հանձնաժողովի նիստի օրվա, ժամի, վայրի, տևողության և պայմանների մասին՝ գների նվազեցման նպատակով, որը տեղի կունենա 2022 թվականի հուլիսի 8-ին, ժամը 15:50-ին, հասցեն՝ Ջրվեժի համայնքապետարան Կոտայքի մարզ, Ջրվեժ համայնք, գյուղ Ջրվեժ Մելքոնյան 76, բանակցությունների տևողությունը՝ 15:50-ից 16:10, յուրաքանչյուր հաջորդող գնային առաջարկ ներկայացնել ոչ ավելի քան 2 րոպեի ընթացում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ Ն.Սանթրոսյան

Անդամներ՝ Ս.Հովհաննիսյան

Հ.Գրիգորյան

Քարտուղար՝ Ա.Պետրոսյան